



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

12 հուլիսի 2016 թվականի թիվ 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻԶԵՎԱՆԻ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ՍԱՏԳ-ՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի թիվ 667-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հուլիսի 11-ի թիվ ԱԱ/ԱՄ-1-3/6127-16 գրությունը

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հջևանի և Դիլիջանի ՍԱՏԳ-ների միջև փաստաթղթերի հանձնման և ընդունման աշխատանքների իրականացման հանձնաժողով հետևյալ կազմով.
  - Նարինե Ճաղարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ
  - Գագիկ Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հջևանի ՍԱՏԳ-ի պետ,
  - Սամվել Սարիսայան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հջևանի ՍԱՏԳ-ի մասնագետ,
  - Սամվել Դավթյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Դիլիջանի ՍԱՏԳ-ի պետ,
  - Վարդան Մաթևոսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Դիլիջանի ՍԱՏԳ-ի գլխավոր մասնագետ:
2. Հանձնաժողովին՝ մինչև ս/թ օգոստոսի 1-ն իրականացնել Հովք, Աղավնավան, Խաչարձան, Ճերմակավան և Գեղատափ գյուղերի փաստագրված ընտանիքներ համապատասխան փաստաթղթերի ընդունման-հանձնման աշխատանքները:



Հ.ԱՐՈՎՅԱՆ